# Համաձայնագիր-2
# 22.02.2019թ. կնքված N ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/4-1 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

**ք. Երևան** «31» հունվարի 2020թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի մի կողմից, և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Մ.Մուրադյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 22.02.2019թ. կնքված N ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/4-1 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1. Պայմանագրի 7.15 կետին համապատասխան հաստատել 2020 թվականին մատուցման ենթակա Պայմանագրով նախատեսված մնացորդային ծավալների (62 օրացուցային օրվա) ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2. 22.02.2019թ. կնքված N ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/4-1 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2020 թվականի հունվարի 8-ից ծագած փաստացի հարաբերությունների նկատմամբ:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե | «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ |
| ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 | ք. Երևան, Սևաստոպոլյան 45 |
| ՀՎՀՀ 02647057 | ՀՎՀՀ 00090751 |
| Հ/Հ 900011054013 | Հ/Հ 2050022433141001 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝ | «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի տնօրեն՝ |
| Է.Գևորգյան | Մ.Մուրադյան |

Հավելված
Հաստատված է
«22» փետրվարի 2019թ. կնքված
N ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/4-1 գնման պայմանագրի փոփոխությամբ

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

**ՀՀ դրամ**

| Ծառայության անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը | **Ընդամենը Տարի** |
| ՀՀ ՊԵԿ մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայություններ | 4232 | 28 342 800 | 28 342 800 | 42 514 286 | 42 514 286 | 42 514 286 | 42 514 286 | 42 514 286 | 42 514 286 | 42 514 286 | 42 514 286 | 42 514 286 | **42 514 286** |

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե | «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ |
| ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 | ք. Երևան, Սևաստոպոլյան 45 |
| ՀՎՀՀ 02647057 | ՀՎՀՀ 00090751 |
| Հ/Հ 900011054013 | Հ/Հ 2050022433141001 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝ | «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի տնօրեն՝ |
| **Է.Գևորգյան** | **Մ.Մուրադյան** |